

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

(գեկուցումների դրույքներ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982



ՀԱՍՏ ՀԱ ՀԱՄԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԼԿԵՄ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՇՐՋԱՌՈՒՄ

A 68306

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵՋԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՆՓԵՐԱՆՍ
նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին
/գեկուցումների դրույթներ/
11-14 մայիսի, 1982թ.

Նաղկածոր



ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ՀԱՄԱՐԱԿԱՊԻՏՈՒՄ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 8 2

ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА АН АРМ. ССР
ИЯСНИКЯНСКИЙ РБ ЛКСМ АРМЕНИИ

II РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ
МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ

посвященная 60-летию образования СССР
(тезисы докладов)

II - 14 мая 1982 г.

г. Дзхкадзор

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ

ՓՈԽՀԱՄԱԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ԱՐՄԵՆ ԱՅՏԸՆՑԱՆԻ ՄԵՆԱՐԱՆՈՒՄԸ

1. Ա.Այտընյանը լեզվի պատմության և նրա համաժամանակյա վիճակի հարաբերությունը քննում է տարբեր առումներով: Բոլոր դեպքերում լեզվական իրողությունների լուսաբանման հիմք է դարձվում համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքների միասնության ըմբռնումը:

2. Այդ միասնության ու կապի ընդունման առաջին դրսևորումն այն է, որ լեզվի որևէ փուլի էության բացահայտումը նա կապում է այդ լեզվի անցած փոփոխությունների շղթայի քննության հետ: Մյուս կողմից, ներկան, անցյալի շարունակություն լինելուց բացի, նաև սկիզբ է ապագայի համար: Գիտակցելով, որ այս վերջին հարաբերությունը շատ ավելի պակաս հստակ ու կանխորոշելի է, քան արդեն տրված ու ստույգ առաջինը՝ Ա.Այտընյանը, այնուամենայնիվ, դիտարկում է որոշ սահմաններում նաև նրա որոշումը: Այս դեպքում արդեն համաժամանակյա հարաբերություններից ըխեցվում է տարժամանակության նկարագիրը:

3. Տարժամանակություն → համաժամանակություն ընթացքը Ա.Այտընյանը օգտագործում է նաև լեզվի պատմության ետահայաց դիտարկման մեջ: Հին և նոր լեզուների տարժամանակյա հարաբերությանը նա զուգարկում է դրան նախորդած մի համաժամանակյա հարաբերություն: Հին և նոր զգրական լեզուների՝ զրաբարի և աշխարհաբարի հակադրությունը որոշիչ է դառնում ոչ միայն նոր փուլի գնահատման, այլև հնի նկարագրության համար: Ժամանակի մեջ իրար հաջորդող զրական լեզուները դիտարկվում են նաև որպես նախկինում զուգահեռ գոյություն ունեցած տարբերակներ: Տարժամանակյա անցումն այսպիսով մեկնաբանվում է որպես ոչ թե մի եզրի փոխարինում մյուսով, այլ մի երկանդամ հակադրության /զրական լեզու-խոսակցական լեզու/ վերածում նույն անդամների հետագա վիճակների նոր հակադրության /մեռած զրական լեզու-կենդանի զրական լեզու/:

4. Չնայած հարաբերվող կողմերի կարգավիճակների փոփոխությանը՝ դրանց համաժամանակյա և տարժամանակյա հարաբերությունները, ըստ Ա.Այտընյանի, ստանում են համանման դրսևորումներ: Նա նշում է մի շարք հատկանիշներ, որոնցով հավասարապես տարբերվում են և՛ հին ու նոր, և՛ զրական ու խոսակցական լեզուները: Սա նշանակում է, որ համաժամանակյա կտրվածքում արդեն հիմնականում առկա է տարբերակների այն առնչակցությունը, որ հետո պիտի քննվածգրական դառնա նրանց տարժամանակյա փոխհարաբերության համար:

ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒՓՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐԶՈՒՄԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. Լեզվական առնչությունների ուսումնասիրումը ժամանակակից լեզվաբանությունից առաջնահերթ խնդիրներից է: Հայոց լեզվի երկու զրական միությունների /արևմտահայերենի և արևելահայերենի/ առնչությունները համապատասխան միջավայրի լեզուների հետ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում և՛ հանրալեզվաբանական, և՛ կառուցվածքային առումներով. մենք հատկապես նկատի ունենք արևմտահայերենն Ամերիկայում /անգլերենի ազդեցություն ունեցող/ և արևելահայերենը Սովետական Հայաստանում /ռուսերենի ազդեցություն ունեցող/:

2. Ամերիկահայ լեզուն լեզվական և հասարակական բոլորովին այլ պայմաններում է գտնվում /ի տարբերություն արևելահայերենի/, և դա յուրահատուկ անդրադարձում է ունենում անգլերենից նրա կատարած փոխառությունների վրա ընդհանրապես և փոխառյալ բառերի տառադարձության վրա մասնավորապես:

3. Ի տարբերություն արևելահայերենի, որը ռուսերենի միջոցով կատարած փոխառությունները սովորաբար ներկայացնում է զրադարձությամբ, արևմտահայերենում անգլերենից և անգլերենի միջոցով վերցված բառերի տառադարձման հիմքում սովորաբար դրվում է արտասանությունը: Տառադարձման դեպքում արտասանական համապատասխանությունը պահպանվում է լիակատար չափով կամ մասնակիորեն:

Արտասանական մասնակի որոշ շեղումներն էլ պայմանավորված են հայերենի /արևմտահայերենի/ արտասանական յուրահատկությամբ:

4. Արևմտահայերենում առանձին դեպքերում գործում է զրադարձությունը:

5. Գրադարձության և հնչյունային հիմքով տառադարձության տարբերությունը սոսկ ուղղազրական արժեք ներկայացնող հարց չէ. դա փոխառյալ բառի բանավոր ու գրավոր տարբերակների ընդհանուր ձևի հարց է:

6. Արևմտահայերենի հիշյալ յուրահատկության կարևոր պատճառ է այն հանգամանքը, որ ամերիկյան անգլերենը բառերը վերցնում է, որպես կանոն, բանավոր խոսքի միջոցով, ի տարբերություն արևելահայերենի, որը փոխառությունները կառուցում է սովորական զրական մասնաբաժանով:

ԸՆԹԵՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԼԻՄՅԱՆ ՄԵՔՈՂԸ ԼԵՋՈՒՆԵՐԻ
ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՓՈԽԼՈՒԽ

Լեզուների արագացված ուսուցման դասընթացը նախատեսում է հնարավորություն տալ տիրապետելու խոսակցական լեզվի ունակություններին 1000-1200 ըառային միավորի ծավալով, ուսուցանել ընթերցանություն 1800-2000 ըառային միավորի սահմանում, մշակել տարբեր խնդիրների շուրջ խոսելու կարողություն: Սա հնարավոր է դառնում դասավանդման ընթացքում ստեղծված անկաշկանդ բարյացակամ մթնոլորտի շնորհիվ:

Առաջխաղացման փուլում ընդլայնվում և ամրապնդվում են ուսուցման սկզբնական շրջանում ծեռք բերված խոսակցական ունակությունները և բանավոր խոսքը լսողությամբ ընկալելու կարողությունը: Այս փուլում ամենակարևոր խնդիրներից մեկը կարդալու հմտության զարգացումն է: Սրան նպաստում է մանկավարժական գիտությունների թեկնածու Ե.Հ. Գալստյանի առաջարկած կարդալ սովորեցնելու եղանակը, այսպես կոչված՝ „Առլիմյան ընթերցանության“, մեթոդը: Այս ընթերցանությունը անցկացվում է հատուկ սարքավորված լսարանում, որ եռակողմ կապի հնարավորություն է ապահովում: Այս կապի շնորհիվ առաջին ունկնդիրը տեքստը կարդում է երկրորդին, երկրորդն այն պատմում է երրորդին: Վերջինս ունի տվյալ տեքստին վերաբերող հարցեր, որոնց օգնությամբ վերահսկում է պատմողի խոսքը:

Այսպիսով, միանգամից լուծվում են ընթերցելու, խոսքը լսողությամբ ընկալելու, վերարտադրելու, վերլուծելու և վերահսկելու խնդիրները:

Տեքստի դյուրընթեռնելիությանը նպաստում է այն հանգամանքը, որ նոր քառերից և արևահայտություններից մի քանիսը նախօրոք թրվել են՝ ունկնդրի հեշտողության մեջ ազդվողելու միտումով, օգտագործելով մասպահումը ակտիվացնող ամենաբազմազան միջոցներ:

Ընթերցումից հետո ունկնդիրները քննարկում են տեքստը. այսինքն, տեքստի նյութի հիման վրա ստեղծագործաբար վերարտադրում են խոսքային զանազան իրադրություններ:

Գ.Ս.ԱՍՏՏՐՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/
ԶՐԴԵՐԵՆ ԺԱՄԱՇԷՆ , ,ԽՈՐԹ ՄԱՅԼ, , ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ

1. ԺԱՄԱՇԷՆ , ,ԽՈՐԹ մայր, , բառը հանդես գալով արյունակցական կապ արտահայտող տերմինների հետ՝ արտահայտում է ընդհանրապես Խորթու-թյան գաղափար: Այն գործածական է միայն քրդերենի հյուսիսային բար-բառում՝ կուլմանգիում:

2. ԺԱՄԱՇԷՆ բառը կարելի է բաժանել $d\bar{a} < d\bar{i}y\bar{a}$ և $m\bar{a}\bar{c}\bar{i}$ բաղադրիչ-ների: Առաջին տարրը $d\bar{a}$ -ն, ,մայր, , բառի իզաֆեմային ձևն է /ստու-գաբանությունը տես *Հոշո P. Geundeziss der neupersischen etymologie*, *Stetass* Եսեջ, 1895, 119/: Բառի երկրորդ՝ $m\bar{a}\bar{c}\bar{i}$, տարրը գոր-ծածվում է միայն ԺԱՄԱՇԷՆ բարդություն կազմում: Ըստ մեզ, այն ծա-գում է հին իր. $m\bar{a}\bar{c}\bar{i}y\bar{a}$ -ից և ազգակից է աֆղ. $maica$, $maza$, ,Խորթ մայր, , բառին:

Այս ստուգաբանությունը կարելի է հիմնավորել այսպես: Հին իր. $\bar{y}e$ -հնչյունախումբը քրդերենում արտացոլվում է երկու ձևով՝ -s- բա-ղաձայնի ձևով. հմմտ. $p\bar{i}s$, ,որդի, , , ափ. $pu\bar{y}a$ -, $d\bar{a}s$, ,մանգաղ, , հին իր. $d\bar{a}\bar{y}a$ - կամ էլ՝ -e/- $\bar{e}$ -ի ձևով. հմմտ. $\bar{a}e$, ,կրակ, , $\bar{a}\bar{y}e$ / $\bar{a}\bar{t}a$ -ից կազմված թեք ձև/, $\bar{z}a$, ,թույլ, , /հին իր. $\bar{y}a\bar{t}a$, $\bar{t}\bar{a}\bar{e}$ կամ էլ՝ , ,գործվածքի հիմք, , ափ. $\bar{t}a\bar{y}a$ $pa\bar{c}a\bar{s}\bar{i}$ ո , ,պաշտպանել, , հին իր. $pa\bar{c}\bar{i}a$ -, $p\bar{i}\bar{s}\bar{o}$, ,տնտեսության մեջ օգնող հասուն պատանի, , հին իր. $visa$ - $pu\bar{y}a$ և այլն: $\bar{y}e$ -> -e/- $\bar{e}$ անցումը -ե- աստիճանի միջոցով հատուկ է հյուսիս արևմտյան իրանական լեզուներին և քնիկ քրդական երևույթ է /տես *Tedesko P. Dialektologie der westiranischen Turfantexte. Le Monde Oriental*, t.14, 1-2, էջ 193)।

Հին իր. բառավերջի $y\bar{a}$ -ն քրդերենում, ժայնավորի երկարությունից անկախ, մեծ մասամբ տալիս է $\bar{i}$, հմմտ. $s\bar{i}$, ,ստվեր, , < ափ. $sa\bar{y}\bar{a}$ -, $ma\bar{s}\bar{i}$, ,ձուկ, , ափ. $ma\bar{y}a$, $x\bar{a}\bar{s}\bar{i}$, ,զրբանչ, , < $x\bar{v}\bar{a}\bar{s}\bar{i}$ հին իր. $x\bar{v}\bar{a}\bar{s}\bar{y}\bar{a}$ - հմմտ. ափ. $x\bar{v}\bar{a}\bar{s}\bar{v}\bar{e}a$ / $k\bar{i}$, ,ով, , ափ. $ka\bar{h}\bar{y}\bar{a}$: Այսպիսով, սկզբնապես - $ma\bar{c}\bar{i}$ նշանակել է , ,Խորթ մայր, , : Հետագայում այն վե-րականգնել էր այդ իմաստը լրացուցիչ $d\bar{a}$ -, ,մայր, , մասնիկի միջո-ցով:

3. Խորթության գաղափարը հնդեվրոպական լեզուներում արտահայտվում է նաև նպատակաւղղվածություն ցույց տվող ձևերի միջոցով: Դրանցից է և $ma\bar{c}\bar{i}$ - $y\bar{a}$ / $ma\bar{c}\bar{i}a$, ,մայր, , բառից ձևը, - $y\bar{a}$ /հնդեվր. - $\bar{i}o$ / անականակերտ վերջածանցով:

ՀՈԼՈՎՄԱՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
XIII ԴԱՐԻ ՄԱՆԻ՝ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՋԱՌԽՄ

Հետևելով պրոֆ. Վ. Առաքելյանին՝ դասական զրաբարի շրջանը համարում ենք ոչ թե մինչև V դարի կեսերը, այլ ամբողջ V դարը: Ետդասական զրաբարի շրջանը՝ VI-XIX դ.դ., պայմանականորեն բաժանում ենք վաղ ետդասական / VI - IX դ.դ. / ուշ ետդասական / X-XVII դ.դ. /, նոր ետդասական / XVIII-XIX դ.դ. / զրաբարի շրջանների, որպեսզի նշված փուլերի լեզվական փաստերի համեմատությունների միջոցով ավելի հստակ ցուցադրվի լեզվի պատմական զարգացման իրական ընթացքը:

XIII դ. մանր ժամանակագրությունների /այսուհետև՝ ՄԺ/ լեզուն ընդհանուր առմամբ զրաբար լինելով հանդերձ՝ ունի միջին զրական հայերենին՝ բարբառային-խոսակցական լեզվին առավել ընդունալ տարրեր:

Հոլովման համակարգում փոփոխություններ ենք գտնում՝ 1/ ներքին թեքման ա/ Դերենիկ-Դերենիկի, փոխանակ՝ Դերենիկան/, ե/սիզդ-սիզեդի, փոխանակ՝ սիզեդը/ հոլովումների մեջ, 2/ արտաքին թեքման ի /մարաջխտ-մարաջխտու, փոխանակ՝ մարաջխտի/, զ /պահք-պահուց, փոխանակ՝ պահուց/, ը /շաքթ-շաքթոյ, փոխանակ՝ շաքթու/ հոլովումների մեջ, 3/ ի-ա /հայրապետ-հայրապետից, փոխանակ՝ հայրապետաց/, ը-ա /տարի-տարու, փոխանակ՝ տարույ/ հոլովումների մեջ, 4/ մեկից ավելի հոլովումներով հոլովվող որոշ բառերի հոլովման մեջ: Օրինակ, կապարժ գոյականը թեքվում է ի պարզ կամ ի-ա խառը հոլովմամբ, բայց ՄԺ-ում գործածվել է արտաքին թեքման ու հոլովմամբ /կապարժու/ և այլն, 6/ դերանվանական հոլովման մեջ /իւր-իւրու, փոխանակ՝ իւրոյ/ և այլն:

Խոնարհման մեջ նկատվող շղթումները համեմատաբար սակավ են՝ մտանեմ-մտաւ, փոխանակ՝ եմուտ, հասանեմ-հասաւ, փոխանակ՝ եհաս, տամուտին, փոխանակ՝ ետուտ և այլն:

Ե խոնարհման որոշ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքում նկատելի է եա>ե հնչյունական անցում /պարսպեց, փոխանակ՝ պարսպեաց, խնդրեց, փոխանակ՝ խնդրեաց, բարոգեց, փոխանակ՝ բարոգեաց/ և այլն: Ե-ով ժևերը հատուկ են միջին զրական հայերենին և լեզվի զարգացման հետագա փուլերին:

Հ.Ա. ԲԱՌՍԱՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/
ԱՅԺՄ ՀԱՍՆԱՑՈՒԹՅԱՆ ԲԱԽԱՆԱՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ՔԱՐԲԱԽՆԵՐՈՒՄ

, , Հայերենի քարադպրոցական առաջին նյութերի հավաքման ծրագրի, , 450-ը քառահոլոված վերաբերում է , , այժմ, , հասկացությունը:

Գրաքարյան այժմ քառածը զրադման 150-ից ավելի խոսվածքներում բո-
լորովին չի հանդիպում: Իրա դիմաց հանդես եկող ժևերը ըստ ծագման
կարելի է խմբավորել այսպես.

1. Առավել տարածված են հեմ արմատով կազմված ժևերը, որոնք են-
թարկվել են զանազան կարգի հնչյունափոխությունների: Հանդիպող հի-
մակ, հիմիկ, հըմիկ, հըմի, հըմիզըս, հիմայեզուզա և այլ ժևեր լիո-
վին արտահայտում են , , այժմ, , բառի հիմնական իմաստը / , , հենց հիմա,
այս ժամին, այս պահին, / :

Հիմա/կ/-ի փոփոխության արդյունք են նաև հըմկա, մըկա, մըզը և
նման ժևերը, որոնք հանդիպում են արևմտահայ խոսվածքների մեծ մա-
սում:

Հիմա/կ/-ի անցումային հաջորդ օղակը հ-մ հնչյունների դրափոխու-
թյամբ ստացված ժևերն են՝ մըհեկ, մըհեզ, մըհենգ և այլն:

2. , , Այժմ, , հասկացության համար քառանվանումների մյուս խումբը
հնդեվրոպական նախալեզվից եկող արդև աշմատով կազմված ժևերն են, որ
առկա են արևելահայ որոշ խոսվածքներում՝ հարդա, հըրդա, հըրո և
այլն:

3. Մշո քարաբառի խոսվածքներում հանդիպում են իղըկա, հիղկա ժևերը,
որ կազմված են այժմ բառի կաղապարով / իղա , , այս, , փախկ. փոխառյալ
արմատ ղա/հ/ , , ժամ, / :

Ա.Ս. ԳԱԼՍՏՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/
ՓՈԽԱԲԵՐԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1. Իմաստաբանական ինքնատիպ երևույթի՝ փոխաբերացման գրոցեսի ու-
սումնասիրության ժամանակ պետք է դուրս գալ լեզվի համակարգի շրջա-
նակներից, դիտարկել այդ երևույթի գոյաբանական հիմքերը: Որևէ առար-
կայի հատկությունները իմանալու դեպքում միայն անհասկանալի չի լինի
այդ առարկայի անվան փոխաբերական գործածությունը:

2. Ժամանակակից հայոց լեզվի փոխաբերացվող բառերի հարուստ նյութի
հիման վրա դիտարկվում է փոխաբերացման ընդհանրական մեխանիզմը. ա-
ռանձնացվում են բառերի փոխաբերացման ժամանակ ի հայտ եկող հետևյալ

իմաստային անցումները. առարկա → առարկա / մի առարկայի անունը փոխաբերացվելով արտահայտում է մի այլ առարկա /, առարկա → հատկանիշ / առարկայի անվանման փոխաբերացման միջոցով արտահայտվում է նրա որևէ հատկանիշը /, հատկանիշ → հատկանիշ / որևէ հատկանիշ փոխաբերական իմաստով գործածվելիս ժեռք է ընելում այլ հատկանիշի իմաստ /, հատկանիշ → առարկա / որևէ հատկանիշ փոխաբերացվելիս արտահայտում է առարկայի հասկացությունը /:

3. Փոխաբերացվող ըստերը դասակարգվում են մի քանի խմբերի. ըստ խոսքի մասերի, ըստ փոխաբերացման հիմքի, ըստ փոխաբերացման ժամանակ տեղի ունեցող իմաստային տեղաշարժերի, ըստ բառի ստացած փոխաբերական իմաստի մեջ վերաբերմունքային երանգի առկայություն:

Հ.Փ. ԳԱԼՍՏՅԱՆ / ՄՈՍԿՎԱ /

ԴԴՐՈՑԱԿԱՆ ԱՐԹՈՒՔՅԱՆ ԼԵՋԱԿԻ ԸՆՏՐՈՒՔՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1. Հանրապետությունում և միություն մի շարք այլ ազգային շրջաններում անցկացրած էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ ազգային-ուսներեն երկլեզվության տարածման հիմնական ուղիներին մեկը հանրակրթական դպրոցն է: Այդ պատճառով, ինչպես նաև դպրոցական կրթության բնագավառում հայերենի և ուսներենի գործառական միջոց տեղաբաշխման նպատակով, սկզբունքային նշանակություն է ստանում երեխաների դպրոցական կրթության լեզվի ընտրության հարցերի ուսումնասիրումը:

2. Երևանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ դպրոցական կրթության լեզվի ընտրության գործում որոշիչ դեր ունի ծնողների սոցիալական պատկանելությունը: Եթե Ֆիզիկական աշխատանքով զբաղվող երևանցիների 89,6 և 10,4 տոկոսն են համապատասխանաբար սովորում հայկական և ուսական դպրոցներում, ապա մտավոր աշխատանքով զբաղվողները շրջանում այդ թվերը հավասար են 50,1 և 49,9 տոկոսի: Ընտանեկան միջավայրի որոշիչ ազդեցությունը էլ պետք է բացատրել ուսական դպրոցների շրջանավարտների համեմատաբար բարձր սոցիալական դիրքը հասարակության մեջ:

3. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցական կրթության լեզուն ուղղակի ազդեցություն ունի անհատի լեզվական վարքի վրա և շատ դեպքերում փաստորեն պայմանավորում է այն: Այս հանգամանքը, ուսներենի տարածմանը նպաստող այլ գործոններից բացի, բացատրվում է նաև նրանով, որ Երևանի արդի խոսակցական լեզուն դեռևս

մշակված, ամբողջական համակարգ է, մի փաստ, որը նվազագույնի է հասցնում հայկական դպրոցի շրջանակից դուրս գրեական հայերենին տիրապետելու հնարավորությունները:

4. Ստեղծված պայմաններում հայ-ռուսներն երկլեզվության համակողմանի զարգացման լավագույն միջոցը պետք է համարել ոչ թե ռուսական դպրոցների ցանցի հետագա ընդլայնումը, որ ոչ բոլոր դեպքերում է նըպաստում մշակույթի ազգային ֆոնդի լիակատար ընդգրկմանը և օգտագործմանը, այլ հայկական դպրոցներում ռուսաց լեզվի և ռուսական դպրոցներում հայոց լեզվի դասավանդման որակի բարելավումը:

Ս.ԳԱԼՍՏՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/

ՏԵՂԱՓՈԽՈՒՓՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒ ԲԱՅԵՐԻ ԽՄԱՍԱՏՅԻՆ
ԱԶՄՈՒՔՅՈՒՆԸ /ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՅՈՒՔԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ/

1. Տեղափոխություն արտահայտող բայերը հայերենում և անգլերենում ըստ ինքնուրույնություն /ոչ ինքնուրույնություն հատկանիշի բաժանվում են երկու խմբի, ընդ որում, ինքնուրույն տեղափոխություն կատարողը հանդես է գալիս սուբյեկտի, իսկ ոչ ինքնուրույն տեղափոխություն կատարողը՝ օբյեկտի իմաստային գործառույթամբ:

2. Տեղափոխություն արտահայտող բայերի իմաստային առանցքը ուղղության իմաստույթն է, որը երկու լեզուներում էլ արտահայտվում է կամ բայարմատով, կամ տեղի ուղղություն ցույց տվող պարագայով. երբևէն այս երկուսն արտահայտվում են միասին՝ ստեղծելով իմաստային հավելուրդայնություն: Տեղափոխություն արտահայտող բայերի հեռ տեղի ուղղության պարագայի կիրառությունը պարտադիր և այնքան սովորական է, որ նրա բացակայությունը որոշ բայերի դեպքում կարող է տեղափոխության իմաստը մղել երկրորդ պլան: Անգլերենում տեղի ուղղության պարագան ցանկացած բայի կարող է տալ տեղափոխության իմաստ:

Ուղղության իմաստույթը մեծ չափով պայմանավորում է նաև տեղափոխություն արտահայտող բայերի փոխաբերական կիրառությունները:

3. Տեղափոխությունը ենթադրում է տարածական ելակետ, անցման ուղի և հանգման կետ, ժամանակային սկզբնակետ, ընթացք և վերջնակետ, ինչպես նաև պատճառ, ձև և նպատակ: Նշված բոլոր իմաստները կարող են բացահայտ կամ ոչ բացահայտ արտահայտություն գտնել լեզվական խոսքաշարում, ընդ որում, հարորդակցման նպատակից կախված՝ նրանցից յուրաքանչյուրը կարող է դառնալ ավյալ իրադրության կիզակետը: Չնի իմաս-

տույթը, եթե այն արտահայտված է բայրամատով և ոչ թե ձևի պարագայով, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հենց նրա շնորհիվ է, որ տեղափոխություն արտահայտող բայերը ստանում են նորանոր փոխաբերական կիրառություններ:

4. Բուն իմաստով տեղափոխություն արտահայտող բայերի իմաստային կազմության հարացույցային ուսումնասիրությունը՝ զուգորդված շարակալային ուսումնասիրության հետ, մեծապես նպաստում է տվյալ բայերի փոխաբերական իմաստների, նրանց տարբեր ներուսակ հատկությունների բացահայտմանը:

Ա. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/

ԲԱՍՄԱՆԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՍՄԱՆԱԶՄԱՆ ՆԻՄԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Հայ և հայերենով զբաղվող լեզվաբանների՝ բառակազմությանը և բառակազմական հիմքերին նվիրված ուսումնասիրությունների պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի. ա/ նախնական շրջան /5-17-րդ դդ./, որի հիմնական հատկանիշը բառի ձևի /բառաբարդման/ և տեսակի /ածանցման/ տարբերակումն է. բ/ քերականության ինքնուրույնացման և ինքնուրույնության շրջան /18-19-րդ դդ./, որը ընդլայնվում է բառակազմության հետ կապված հասկացությունների մշակումով ու ընդլայնմամբ, առանձին հակասությունների վերացմամբ. գ/ նոր և սովետական շրջան, որի համար հատկանշական են ավանդական քերականության հիմքի վրա բառակազմական ողջ կառույցի քննումը, բառային համակարգի ընդգրկող սկզբունքների ու քանակների ստեղծման փորձերը, բառակազմական կաղապարների ու տիպերի որոշումը, բառակառույցի հետազոտման սկզբունքի և տերմինավորման հստակումը, հայոց լեզվի բառակազմությունը մանրադիտակային մշակումով ներկայացնելը և այլն:

2. Բառային համակարգի ոչ միատարրությունը, լեզվի անընդհատ զարգացումն ու ինքնահղվումը ստեղծում են այնպիսի վիճակ, որ մշտապես կարող են ծագել հակասություններ ու լինել շլուծված հարցեր:

Քննվող հարցի ուսումնասիրության ընթացքում զոհել ենք, որ նպատակահարմար է.

ա/ Բառակազմություն տերմինը գործածել լայն առումով, նեղ իմաստով կիրառել բառակերտում, բառաստեղծում կամ բառաշինություն ավանդական անվանումներից մեկը:

բ/ Բառակազմական հիմք, ձևակազմական հիմք կապակցությունների հիմք տերմինի բազմիմաստությունից խուսափելու նպատակով այն թողնել որպես ձևակազմության տերմին, իսկ բառակազմության համար ներմուծել ակադեմիկոս էդ.Աղայանի հիմույթ տերմինը:

զ/ Սերող հիմքի /հիմույթի/ կազմությունը /պարզ՝ արմատական, և քաղաղոված/ անիջապես արտահայտելու նպատակով առջին դեպքի համար կիրառել ընամաս /նախափալ, սկզբնափալ/, իսկ երկրորդի համար՝ ամամաս /հավելամաս/ անվանումները: Այսպիսով, կունենանք ընամաս սերող հիմույթ և ամամաս սերող հիմույթ քաղաղոյալ տերմինները:

դ/ Բառակառույցի հետազոտման համար ընդունել երկատման սկզբունքը և քառերը ենթալիքավորել ինչպես ըստ խոսքամասային, այնպես էլ կառուցվածքային և այլ հատկանիշների:

Մ.Խ. ԳՅՈՒԼՆԱՋԱՐՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/

ԽԵՑԵԼՆԻ ԻՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. Խեցեղենը իր տեսականիով ժողովուրդների նյութական մշակույթում համեմատաբար կայուն է և ազգային քիչ առանձնահատկություններ է դրսևորում: Այդ իրերի անվանումները ընդհանուր են շատ լեզուներում:

2. Խեցեղեն իրերի փոխառյալ անվանումները, ինչպես կիրառական արվեստի տերմինների մեծ մասը, կարելի է դասակարգել ըստ ազգագրական շրջանի ընդհանրության:

3. Այդուհանդերձ, խեցեղեն իրերը հայ կենցաղում դրսևորում են ազգային կիրառական տարածքային, ազգագրական որոշ առանձնահատկություններ: Դրանք արտահայտվում են զրախան հայերենում և բարբառներում առկա անվանումների միջոցով:

Դրանց մի մասը հարկ եղած դեպքում կարող է փոխառվել այլ լեզուների կողմից որպես միայն տեղական-կենցաղային կամ արվեստի վերաբերող իրողությունների անվանումներ:

4. Խեցեղեն իրերի անվանումների իմաստային նրբերանգները քացահայտելուց հետո դրանց զգալի մասը կարող է ձեռք բերել տերմինի արժեք:

5. Քանի որ տվյալ աշխատանքի համար քառարանագրական նյութը քավարար չէ, ուստի հայ մատենագրության տվյալները կարող են հիմք դառնալ այդ իրերի ազգագրական կիրառական ամբողջական ընունթագիրը տալու և դրանց անվանումները որպես պատմական տերմին կիրառելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԸ
ԼԵՋԱԿԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Լեզվում միաժամանակ գործում են երկու իրար հակադիր միտումներ՝ էնթրոպիան և կարգավորումը: Էնթրոպիան տանում է դեպի լեզվի իդեալական համակարգից նրա իրական գոյի հեռացում և ցրում, իսկ կարգավորումը՝ դեպի իդեալական համակարգին մերձեցում և կենտրոնացում:

Էնթրոպիայի արտահայտություն են հավելուղայնության մը /զուգածությունների, տարբերակների ու համանիշների առաջացում, բազմիմաստության ծավալում/, տարասեռության մը /օտար ներթափանցումների, բարբառայնությունների ծարածում/:

Կարգավորման արտահայտություն են զրական լեզվի զարգացումն ու ժողովրդականացումը, բարբառների հաղթահարումը, օտարաբանությունների արժամողումը:

2. Էնթրոպիային և կարգավորմանը համապատասխան ավելի մասնավոր հաուկացություններ են լեզվական համակարգի և միջոցների տարասեռությունն ու համասեռությունը:

3. Տարասեռությունը կարող է լինել ներքին և արտաքին: Ներքին տարասեռությունը հետևանք է լեզվի գոյության տարբերակային ձևերի փոխադեցության, իսկ արտաքին տարասեռությունը՝ տարբեր լեզուների փոխադեցության:

Տարասեռության առաջացման ձևերն են լեզվական տարբեր համակարգերի փոխներթափանցումը /փոխառություն և տեղադրում/ և փոխանցումը:

4. Տարասեռությանը և համասեռությանը համապատասխան մասնավոր երեվույթներ են արձաքին փոխառությունը և օտարաբանությունների արտամղումը:

Արձաքին փոխառության տեսակներն են փոխարինիչները /անհրաժեշտ փոխառություն/ և օտարաբանությունները /ոչ անհրաժեշտ փոխառություն/:

5. Արձաքին փոխառությունները լեզվի համասեռությունը ամենից մեծ չափով խախտող միջոցներն են, ուստի լեզվի համասեռացման, կարգավորման միտումները առաջին հերթին ուղղված են դրանց դեմ: Լեզվի քնականոն և ազատ զարգացումը ենթադրում է արձաքին ներթափանցումների նկատմամբ դիմադրության և օտարաբանությունների արժամողման միտումների գոյությունը:

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՒԸ
1858-1870 ԹՎԵՐԻՆ

1. Արեւելահայ գրական լեզուն նորմավորվում է ավելի գիտական, քան զեղազիտական բովանդակութեան արտահայտման պահանջմունքից, և նշված ժամանակահատվածում ամենից մեծ նորմավորում ունի գրական լեզվի գիտական գործառական ոմը: 40-60-ական թվերին գիտական բովանդակութեանը արտահայտվում է աննշան գրականացված ըստբառով և գրական լեզվի տարբերակներով, որոնք դիտում ենք ժողովուրդում: ,,Մեղու Հայաստանի,, պարբերականի գիտական արտահայտման մեջ առանձնացնում ենք երեք ոմ՝ Ա,Բ, Գ:Բ ոմը ամենից ընդհանրականն է, և 60-ական թվերի սկզբից գիտական գործառութեան նորմայի բնույթ է կրում: Ա ոմը առանձնանում է ժողովրդաբարբառային տարրերի առատութեամբ, սակավ գործածական է և 60-ական թվերին դուրս է մղվում: Գ ոմը Բ ոմի ակնհայտորեն զբաղեցված տարբերակն է, որը բավականին գործածական է և դուրս է մղվում 70-ական թվերին: ,,Հյուսիսափայլի,, ոմը աննշան չափով բարձր ոմի երանգ ունի Գ ոմի համեմատութեամբ: Նորմա դարձող Բ ոմը՝ եվրոպական լեզուների և ուսուցիչների գիտական գործառական ոմերի համեմատութեամբ արտահայտման մակարդակով իրականում նկատելիորեն ցածր է, այն ձևավորվում է միջին բարդութեան գիտական բովանդակութեան արտահայտման պայմաններում:

2. Ձափավոր է օգտագործվում արևմտահայ տերմինաբանությունը, այսուհանդերձ կան հավելային և սակավ օգտագործման անբերե միտումներ: Սեփական բառապաշարը և բառակազմական միջոցները օգտագործվում են ելնելով 19-րդ դարի զրաբարի կանոնից: Այդ կանոնից նկատելի շեղում ունի ,,Հյուսիսափայլը,,:

3. Նորակազմությունները մեծ մասամբ ստեղծվում են գերմաներենի և ուսուցիչների հիման վրա, նկատելիորեն աճել է գիտական լատիներենի դերը: Պատճենման բառակազմության և այլ թերությունները թույլ են զգացվում: Եվրոպական փոխառությունները մեծ չափով նվազել են, համարյա վերացել են թուրք-պարսկական նորագույն փոխառությունները, հատկապես Գ և Բ ոմերում ,,Հյուսիսափայլում,,:

ՄԱՍՆԱՆԻ ՀԱՄԱԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԲԱՐԴ ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆՈՒԽ

1. Իբրև գործողութիւնների միջև հաւաքովոր ժամանակային հարաբերութիւնների մի տարածասակ, մասնակի համաժամանակութիւնը լեզվական դրսևորում է ստանում քարդ նախադասութիւն ուղղակի կառուցվածքների մեջ: Իրենց իմաստային ընդհանրութիւն հիմունքով սրանք միավորվում են համանիշական մեկ շարքի մեջ՝ ընդգրկելով քարդ նախադասութիւն ստորադասական և համադասական տիպերի շաղկապովոր ու անշաղկապ տեսակները:

2. Ստորադասական շաղկապովոր նախադասութիւններում մասնակի համաժամանակութիւն տրտախայտելու դերով կիրառվում են եբբ, եբբ որ, որ, մինչ, մինչդեռ, մինչև շաղկապները: Համանիշական ամբողջ շարքի համար ղերիշխող /հիմնական/ անդամ է համարվում երբ շաղկապով ծանվորված կառույցը՝ իբրև իմաստային աղ հարաբերութիւնը առաքել համարմեք արտախայտող, համախաղար ավելի համախական և ոմականորեն չեղող կառուցվածք:

3. Եբբ շաղկապով և սրա ոմական տարբերակներով /եբբ որ, որ/ կապակցված նախադասութիւնները մասնակի համաժամանակութիւն արտախայտելիս հանդես են քերում համանիշական փոխակերպումների ենթարկվելու հետքըքրական հաւաքովորութիւններ: Սրանց միջոցով արտախայտված ժամանակային իմաստը համախ կտկված չէ մասերի միջև քերականական կախման ընուլթից: Շաղկապը կարող է վերաքերել քարդ նախադասութիւն մասերից յուրաքանչյուրին և, փոխելով քերականական կախման ուղղվածութիւնը, ստեղծել համանիշների հետքըքրական գույգեր:

4. Համադասական և անշաղկապ համանիշ կառույցների մեջ մասնակի համաժամանակութիւն դրսևորմանը ծառայող հիմնական միջոցը մասերի ստորոգյալների ժամանակային փոխաղաքնրութիւնն է /անցյալ անկառաւանցյալ կատարյալ/: Սրանց և ղերիշխող անդամի համանիշական փոխակերպմանը պետք է նպաստեն նաև մասերի քաղակազմերը:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՄԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԻՐԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բարբառագիտական տարբեր երկերում հնչյունափոխական անկանոնությունները համարվող օրինակների քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը աղպիսին է դիտվել համեմատության եզրերը միշտ չընտրելու պատճառով: Նկատելի են հետևյալ դեպքերը.

ա/ Նախածն է համարվում հին շրջանից ավանդված զուգահեռ ձևերից այն, որն առավել տարածված է և ընտիր, թեև տվյալ բարբառի օրինաչափություններից ելնելով պետք էր նախածն համարել մյուսը /զեւղ-զիւղ, մօրուք-միրուք, հրեշտակ-հրիշտակ, վիշապ-յուշապ, շաղգամ-շողգամ, ցայտել-ցայթել/:

բ/ Հինհայերենյան ձևերից /բնիկ և փոխառյալ/ ծագած են համարվում նոր շրջանում կատարված թուրք-պարսկական փոխառությունները. 1/ամլիկ, աղու, հայիլ-մայիլ, սուլթուն, փէյի. 2/ բախտավար, էշ-զիրտ, նախըր, փախըր, քիսա:

գ/ Գրաբարով ավանդված ձևերից բխեցվում են բարբառային այնպիսի բառեր, որոնք ակնհայտորեն ենթադրում են այլ նախածներ, ծագում են այլ աղբյուրներից. 1/ յօրանշել-առըշտոտալ, շրորդան-մօռնակաթ, ծոր-ծորակ-պուժուժակ, անթեղոց-անթրոց, կմեպ-քչիվ. 2/ փել-բել, թըր-շել-դրշել, փաթթել-պատտել, տալ-տալվ, զայլ-զուլ:

դ/ Բառերի զրաբարյան կերպարանքը հաստատուն ելակետային եզր է ընդունվում նաև այն ժամանակ, երբ ակնհայտ է, որ բարբառային ձևերը առաջացել են սեփական՝ զրաբարից տարբեր բառակազմական ու ձևակազմական եղանակներով /իշնել-էշնել, մանաշել-մանչընալ, թուլանալ-թուլ-նալ/:

ե/ Ելակետային են դիտվում միջին հայերենով ավանդված ձևերը /զերազանցապես փոխառություններ/՝ անտեսելով մի կողմից՝ միջին հայերենի հնչյունական տառադարձության յուրահատկությունները և, մյուս կողմից՝ այն, որ միջին հայերենը չէր կարող ելակետ լինել բարբառների համար, քանի որ բարբառների մեծ մասը միջին հայերենի շրջանում արդեն հիմնական զոնորով ձևավորվել էր /ապրա-աբրա, տաղել-դաղել, միմ-չիմ, պատինժան-բաղըրջան, կումաշ-դումաշ, մահոսի-մըղ-դըսի/:

ՆՈՒՅՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆՈՒՄԵՐԸ

1. Մի կողմ թողնելով բազմիմաստություն և համանունության տեսական և գործնական տարբերակման ուղղությամբ լեզվաբանության ճեղքերած նվաճումները՝ նշենք, որ ոչ բազմիմաստությունը և ոչ համանունությունը չեն արտացոլում իրենց ըմբռնումների բուն էությունը և մեկը՝ բովանդակության, մյուսը՝ արտահայտության պլաններից անվանում են մի նույնական երևույթ: Այս իմաստով, բազմիմաստությունը համանունություն է, համանունությունը՝ բազմիմաստություն, և լեզվաբանական զրականության մեջ լեզվական այս երկու երևույթները քանի զուգում, ավելի համախ են հանդիպում միասնական բացօթյա /նույնանունություն/ անվան տակ:

2. Արտահայտության պլանում նույնություն ներկայացնելով՝ բազմիմաստությունը և համանունությունը բովանդակության պլանում ունեն տարբեր հատկանիշներ, որոնք իմացաբանորեն արժեքավորելու համար առաջարկում ենք բովանդակության պլանի հետևյալ աստիճանավորումը՝ ինքնիմաստություն-մերժիմաստություն-հարիմաստություն-հեռիմաստություն-տարիմաստություն աստիճաններով: Այս աստիճանացույցը վաղ կերպով արտահայտում է բազմիմաստության և համանունության տարբերությունը. առաջինը բնութագրվում է հարիմաստությամբ, երկրորդը՝ տարիմաստությամբ, այլ կերպ ասած՝ բազմիմաստությունը նույնանունությամբ և հարիմաստությամբ, իսկ համանունությունը՝ նույնանունությամբ և տարիմաստությամբ բնութագրվող համակարգեր են:

3. Բազմիմաստության և համանունության ուսումնասիրության մեջ կիրառում գտած հարիմաստություն և տարիմաստություն աստիճաններից բացի հանդես եկող ինքնիմաստություն, մերժիմաստություն և հեռիմաստություն աստիճանները լայն կիրառություն են ստանում քառահամակարգի այլ ղրսեորումների՝ համանիշության, նույնանիշության և հականիշության ընազավառի խոր ուսումնասիրության համար, եթե նույն հատկանիշների հիման վրա լեզվի արտահայտության պլանում ևս հետևողականորեն կատարվի աստիճանավորում /ինքնանունություն-մերժանունություն-հարանունություն-հեռանունություն-տարանունություն/, և լեզվական ամեն մի նշան դիտարկվի բովանդակության և արտահայտության պլանների հինգական աստիճանների խաչաձևման լույսի տակ:



Լեզվական կառուցվածքի բոլոր կողմերի հետ սերտ կապի մեջ գտնվող շարադասության օրինաչափությունների բացահայտումը ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն. մի կողմից՝ նախատում է ամբողջությամբ վերցված լեզվի համակարգի ավելի խորը ուսումնասիրմանը, մյուս կողմից՝ կարևոր է ըուհում դասավանդման, թարգմանություն, կիրառական լեզվաբանություն և այլ խնդիրների տեսակետից:

Սակայն գոյություն ունեն գրաբարի շարադասության պրոբլեմի լուծումը զգալիորեն դժվարացնող մի շարք պատճառներ: Օբյեկտիվ դժվարություն է հաղուցում այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվական համակարգի հաղորդակցական, իմաստային, ռեալիտետայնության կողմերի և քառային, ձևաբանական, շարայնուսական գործոնների միջև գոյություն ունի սերտ փոխերգործություն: Սուբյեկտիվ դժվարությունը գրաբարի շարայնուսության ուսումնասիրության դեռևս համաժամաբար ոչ բավարար վիճակն է:

Ի մի քերելով անցողական քայով եռաքաղաղրիչ նախադասություններում անմիջական դեռարկման և համակարգային վերլուծության մեթոդներով կատարվող շարայնուսական կապերի ու դիրքային փոխարաբերությունների ուսումնասիրության արդյունքները, կարելի է եզրակացնել.

1. Գրաբարում առկա են եռաքաղաղրիչ նախադասությունների շարադասության վեց հնարավոր դիրքային տարբերակումները /SVO, SOV և այլն/:

2. Շարադասության ազատությունը, եթե մի կողմից՝ ենթադրում է լեզվում տարբեր բնույթի գործոնների առկայություն, ապա մյուս կողմից՝ պայմանավորում է վերոհիշյալ վեց տարբերակումներից յուրաքանչյուրում շարադասության ելակետային և փոփոխված դրությունների սահմանման անհրաժեշտությունը:

3. Այդ գործոնները կարելի է դասակարգել շարադասության մի քանի սկզբունքներով՝ ձևաիմաստային կամ քերականական, իրադրա-խոսքա-շարային և այլն:

4. Վերոհիշյալ սկզբունքներով ելակետային են յուրաքանչյուր քաղաղրիչի միայն այն դիրքերը, որոնք պայմանավորված են քերականական գործոններով: Հետևաբար, փոփոխված /շրջված/ պիտի կոչել նրանց այնպիսի դիրքերը, որոնք ձևավորվում են քերականական բնույթ չունեցող գործոններով:

ԳՐԱԲԱՐԻ ՈՅ ԵՎ ԻՒ ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԱՅՅՈՒՆԱՓՈԹՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Ձեկուցման մեջ արժարժվում են զրաբարի ոյ և իւ երկբարբառնե-
րի պատմական հնչյունափոխության որոշ հարցեր՝ հիմք ընդունելով հա-
յերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի, Սիլիկյան, մա-
սամբ Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի, Վանի բարբառաբանների ընծե-
ռած նյութը:

1. Ոյ-ի դիմաց առկա երկբարբառային-երկհնչյունային դրսևորում-
ները՝ ոյ ոյո, ուօյ, ուալ, ալ /բոյր-բոր, բյոր, բուօյր, բուալր.../ և դրանց դերը միջին հայերենում ոյ-ի արտասանական արժեքի մշտորոշ-
ման հարցում:

2. Ոյ-ի հնչյունափոխությունը Սիլիկիայի և Անտիոքի տարած-
քում, իբրև առավելապես արտաքին գործոններով բացատրվող հնչյունափո-
խական երևույթ:

3. Անտիոքի տարածքում ոյ երկբարբառի երկակի զարգացման դեր-
սևորումը /ոյ-ի դիմաց պարզ ծայնավոր՝ գրոյց զորեց. ոյ-ի երկհն-
չյունային բնույթի պահպանում՝ լոյս լուօյս/, իբրև երկու տարբեր
միտումների համադրման արդյունք, տարածքային հին ու նոր հատկա-
նիշների գուգակցում:

4. Բարբառների որոշակի տարածքում մի շարք բառերի մեջ /ծիւն,
սիւն, դիւր.../ իւ երկբարբառի շեղումը օրինաչափ հնչյունափոխու-
թյունից և նույնացումը ոյ երկբարբառի հնչյունափոխությանը /հմտ.՝
ծիւն-ցօն, ծօն, ծոն, ծուօյն, ծայն, ծուալն և քոյր-քօր, բոր,
բուօյր, բայր, բուալր/: Այս երևույթի ունեցած նշանակությունը
միջին հայերենում իւ-ի դիմաց որոշ բառերում արժանագրված ոյ տա-
ռակապակցության /դիւր-դոյր, արիւն-արոյն/ արտասանական արժեքի
մշտորոշման համար:

5. Միջին հայերենում առկա և արդի բարբառներում դրսևորվող
նշված երևույթի հիմքերի որոնումը նախամիջինհայերենյան կամ ավե-
լի վաղ շրջանում /զասական զրաբարում ավանդված դիւր արմատի դոյր
գրությամբ տարբերակ՝ անդոյր/ /ընդոյր/:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱՀԻՄԲ ՀՈԼՈՎՄԱՆ

ՊԱՀՊԱՆՎԱԾ ՄԱՍՑՈՐԴՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. Տարահիմբ /հետերոկլիտիկ/ հոլովումը հնդեվրոպական ամենա-
արխայիկ լեզվական երևույթներից մեկն է համարվում: Տարահիմբու-
թյունը հիմնականում դրսևորվում է ուղիղ /ուղղ. և հայց./ և թեք
/մյուս, բացի ուղղ. և հայց./ հոլովների բաղադասական հիմքակազ-
միչների հակադրությամբ: Ըստ այդմ տարբերում են -չ/-ո, -ւ/-ո և
-թ/-ո հնագույն հնդեվրոպական տարահիմբ հոլովման տիպերը:

2. Հայերենում հոլովման այդ տիպերը դրսևորվում են հիմնակա-
նում մնացորդային ձևով՝ ա/շատ հազվադեպ պահպանվել են ամբողջական
հարացույցներ, որոնք քննվում են իբրև զարտուղի հոլովման տիպեր,
այսինքն հայերենի մակարդակում չբացատրվող, աքսիոմատիկ հարացույ-
ցներ, ք/որոշ բառեր փոխվել են իրենց հոլովման տիպը բաղադասական
հիմքակազմիչների հերթագայությունը փոխարինելով ներքին ձայնավոր-
ների հերթագայությամբ, գ/ ավելի հաճախ հետերոկլիտիկ հարացույցի
հիմքերը առանձին-առանձին բառայնացման են ենթարկվել:

3. Հնագույն տարահիմբ հոլովման տիպերի հայերենում պահպա-
նված քեկտրները համեմատական քննության դրվելով հնդեվրոպական այլ
լեզուների համապատասխան փաստերի հետ՝ հնաբավորություն են տալիս
ա/ իրարից անկախ թվացող բառերի նախնական քերականական լծորդակ-
ցության բացահայտման, ք/ ստուգաբանությունների մշգրտման, գ/հնդե-
վրոպական հնագույն լեզվական և տարածքային վիճակի վերաբերյալ ո-
րոշ դիտողությունների համար:

ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ՓՈԽԱՌՑԱԼ
ԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հայոց լեզվի զրաբարյան փուլում գործառում են մոտ 100 փոխառյալ ածականներ. դրանցից մի քանիսը՝ աչալեզ, ասպամարակական, ասպատանիկ, դրուժան, զարտակ, թուանիկ, համավար, մապուկ, մարտուկ և այլն, գործառական ակտիվություն չունեցող բառեր են և հայ մատենագրության մեջ կիրառված են լուկ 1-2 անգամ: Փոխառյալ ածականների գերակշիռ մասը որակական է: Ձևային-կառուցվածքային տեսակետից առանձնանում են դժ/թշ/ հնչյունակապակցությամբ, ակ վերջածանցով և ասպ բաղադրիչով կազմությունները:

2. Հայերենում գույներ արտահայտող ածականները հիմնականում իրանական ծագում ունեն. դրանք են՝ աշխետ, ատրագոյն, երաշիւ, զարտակ, կապոյտ, կարմիր, մարտակ, մերմակ, սեւ, սպիտակ: Մանուշակագոյն, վարդագոյն բառերի երկու բաղադրիչներն էլ իրանական են, բայց դրանք կարող են լինել և հայկազմություններ:

3. Երաշխ, զարտակ, մարտուկ, մերմակ բառերը դրսևորում են և գործառական, և իմաստային սահմանափակություն՝ արտահայտելով միայն ծիուկ վերաբերող գույն: Սրանք կոնկրետ առարկային վերաբերող գույնանուններ են և այլ խոսքաշարում չեն կիրառվում:

4. Որոշ փաստեր հիմք են տալիս ենթադրելու, որ սեւ և կարմիր ածականները, որոնք արդեն 5-րդ դարից լայն ու բազմալորտ կիրառություն ունեն, սկզբնապես նույնպես վերաբերում էին որևէ կոնկրետ առարկայի: Հետագայում նրանք հայերենում լայն կիրառություն են ըստանում՝ դուրս մղելով բնիկ կամ այլ լեզուներից փոխառյալ համանիշ բառերը:

5. Իրանական ծագում ունեցող գույնանունները հայերենին են անցել հիմնականում միջին իրանական լեզուների շրջանից՝ զահլավերենից:

ՊԱՐԱԿԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ ԽԱՐԱՎՅԱՆԻ

,,ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ,, ՎԵՊՈՒՄ

1. ԽԱՔՈՎՅԱՆԻ ԼԵՂՈՒՆ և ԼԵՂՎԱԳԻՄԱԿԱՆ հայացքները միշտ էլ զբաղեցրել են մեր Լեզվաբաններին, զրականագետներին ու մանկավարժներին: Տարբեր առիթներով քննության առարկա են դարձել ,,Վերք Հայաստանի,, վեպի Լեզվուժ և իր փոխառությունները՝ իրանական Լեզուներից, արաբերենից ու թուրքերենից:

Նշված փոխառությունները ,,Վերք Հայաստանիում,, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայերենի պատմական զարգացման՝ ինչպես զրական, այնպես էլ ժողովրդախոսակցական Լեզվի միտումների տեսակետից:

2. ,,Վերքի,, Լեզվում հանդիպող իրանական փոխառությունների քննությունը վերաբերող այս զեկուցման մեջ՝

ա. Ուղղագրվում են իրանական փոխառությունների շրջանակները ,,Վերքի,, Լեզվում՝ ըստ գործածության ոլորտների:

բ. Փորձ է արվում պարզել նաև, թե ինչ խոսքի մասեր են փոխառվել, և հայերենում փոխվել է արդյոք նրանց խոսքի մասային պատկանելությունը:

գ. Առանձնացվում են վեպում հանդիպող մասնակի փոխառությունները /հայերեն և պարսկական բառակազմական բաղադրիչների տարբեր գույքորդություններով բաղադրված բառերը/:

դ. Բացատրվում են ,,Վերքի,, փոխառյալ բառերի և դրանց խոսակցական ձևերի իմաստային զանազանությունները:

3. ,,Վերքի,, պարսկերենից փոխառյալ բառերը հիմնականում վերցված են ժողովրդախոսակցական Լեզվից: Այդ բառերը դուրս են մնացել զրական հայերենից:

Լ.Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հ.Լ. ՋԱԲԱՐՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/
ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերենը իր զրավոր զարգացման 1500-ամյա պատմության ընթացքում ունեցել է մի քանի զրազան լեզուներ, որոնց միմյանցից տարբերվում են իրենց մշակվածության աստիճանով, նորմավորման ընթացքի առանձնահատկություններով:

1. Գրաբարը՝ հին զրական հայերենը, մեզ պանդված իր ամենահին վիճակով արդեն ունեցել է մշակվածության բարձր աստիճան, նորմայի խիստ կայունություն, կառուցվածքային միասնական նկարագիր, առանց որոշակիորեն սահմանազատվող համակարգային /առանձնաքային/ կամ հասարակական/ տարբերակների: Սա նշանակում է, որ գրաբարը որևէ բարբառի կամ բարբառամբի հիմքի վրա նախապես կազմավորված ընդհանուր խոսակցական լեզվի զրական մշակման ենթարկված ձևն է:

Սակայն, չնայած իր միասնականությանն ու զործառական համապարփակությանը, գրաբարի համակարգը ուներ կենդանի, զարգացող լեզվին հատուկ իր ներքին հակասությունները, անկանոնություններն ու զուգաձևություններն, նոր սաղմնավորվող և արդեն մահացող իրականությունները:

2. Միջին հայերենը բարձրացավ ձևավորվող կոյնեի հիմքի վրա: Սակայն միջին հայերենը չունեցավ զրական մշակման այն ուժեղ դպրոցը, ինչ ուներ գրաբարը: Միջին հայերենի համակարգը առավել տարասեռ է ու անմիօրինակ, ներթափանցված՝ ալլահամակարգային տարրերով:

3. Նոր զրական հայերենը՝ աշխարհաբարը ևս իր սաղմնավորման փուլում հիմնված էր նոր ձևավորվող վերաբարբառային, քաղաքային միջին ստանդարտի վրա: Սակայն պաթմական հանգամանքները չնպաստեցին այդ հիմքի վրա մեկ միասնական զրական լեզվի կազմավորմանը: Աշխարհաբարը երկփեղկվեց:

4. Արևմտահայ զրական լեզուն հիմնվելով արևմտյան մի խումբ բարբառների, հառկապես Պոլսի բարբառի վրա, ձևով բերեց զրական մշակման ուժեղ դպրոց և նորմավորման հեռուդական ավանդույթներ:

5. Գրական արևելահայերենը, XIX դարում դրվելով գիտակցված և մասամբ արհեստական նորմավորման հիմքի վրա, միշտ է, ձևով բերեց որոշ միասնականություն, սակայն մնաց խոսակցական հիմքից բավականաչափ մեկուսացած: Մեն չափով ենթարկվելով դեռևս զործառող գրաբարի և ծաղկում ապրող բարբառների ուժեղ ազդեցությանը, այն ուներ տարասեռությամբ ու անմիօրինակությամբ աչքի ընկնող համակարգ:

Ներկայումս զրական արևելահայերենը սկսել է ժողովրդականանալ ու առավել կենդանանալ: Նրա ազդեցությունը ձևավորվում է ընդհանուր խոսակցական ստանդարտը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՐԱԳԱՑՎԱԾ ՄԵԹՈԴՈՒՄ

Անգլերեն լեզվի ուսուցման արագացված դասընթացը նախատեսում է դիմել քերականությանը միայն որպես խոսքի կառուցվածքային կազմակերպման ըմբռնման միջոցի: Մենք այդ սկզբունքին հետևում ենք ուսուցման սկզբնական փուլերում: Դրան ծառայում են աշխատանքի որոշակի ձևեր, որոնք մտնում են պարապմունքների ընթացքի մեջ:

Ունկնդիրների կողմից լեզվի քերականական կառուցվածքը լիովին ըմբռնելու և նրանց խոսքի որոշ մնացորդային թերուժյուլենները վերացնելու համար Ե.Զ.Գալստյանի կողմից առաջարկվեց դասընթացին ավելացնել քերականական փուլ:

Այդ փուլը կիրառվում է այն ժամանակ, երբ ունկնդիրը արդեն տիրապետում է խոսքի որոշակի մակարդակի:

Դասընթացի վերահիշյալ փուլում յուրաքանչյուր քերականական նյութ մատուցվում է չորս տարբեր միջոցներով.

1. Տվյալ թեմայով ձայնագրությունների ունկնդրում, որն իրենից ներկայացնում է իմաստին ուղղված քերականական երևույթների ըննարկումը:

2. Տվյալ քերականական նյութի մատուցում կանոններով և օրինակներով:

3. Դասախոսի հետ տվյալ քերականական երևույթների ըննարկում:

4. Մտապահումը ակտիվացնող միջոցների կիրառում, քերականական այս կամ այն կարգով պայմանավորված իմաստների տարբերությունների հաշվառմամբ:

Նյութի ամրապնդման համար առաջադրվում են վարժույթյունների բազմաթիվ տարբերակներ, զրույցներ, զանազան խոսքային իրադրույթյուններ:

Արդյունքում ձեռք է բերվում բազմազան լեզվական նրբույթյունների գիծակցմամբ անսխալ խոսք:

Ռ.Ս.ՄԵԼԻԲԱՅԵՅԱՆ /ԵՐԵՎԱՆ/

ԽՈՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԲՈՅՈՒՆԻ ԵՆԹԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԸՆՏ ՆՏՈՐԱԴԱՆ ԳՈՅԱԿԱՆԱՆԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

ԽՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ

